Ոչ պաշտոնական թարգմանություն

ԿԱՐԾԻՔ

««ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմնված օրենքի նախագծի՝ ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի կողմից տրամադրված անգլերեն ոչ պաշտոնական թարգմանության վրա

Սույն կարծիքի մշակմանն իր նպաստն է ունեցել Կրոնի և համոզմունքների ազատության ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի խորհրդատվական խորհուրդը

Ul Miodowa 10 PL-00-251 Warsaw ph. +48 22 520 06 00 fax. +48 22 520 0605

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքը «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրինագծի վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆԱԽԱԲԱՆ
2. ԿԱՐԾԻՔԻ ԱՌԱՐԿԱՆ
3. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓ
4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
   4.1. Մարդու իրավունքների ոլորտի միջազգային չափանիշները զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման վերաբերյալ
   4.2. Օրինագծի վերլուծություն

Հավելված 1. ««Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

1. ՆԱԽԱԲԱՆ

1. 2011թ. հուլիսի 11-ին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը նամակով դիմել է ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակին՝ խնդրելով, որպեսզի ««Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին՝ իրավական գնահատականի հարցում, թե որքանով է այն համապատասխանում ոլորտի միջազգային չափանիշներին:
2. Համաձայն գործող ընթացակարգի՝ ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակն ուղարկել է հիշյալ դիմումը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ համապատասխան փաստաթղթերի անգլերեն տարբերակների հետ միասին: Սույն կարծիքը մշակված է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Օրենսդրական աջակցության միավորի կողմից՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Կրոնի և համոզմունքների ազատության հարցերի խորհրդատվական խորհրդի հետ համատեղ: Վերջինս կրոնի և համոզմունքների ազատության բնագավառում լուրջ գիտական կարողություններ ունեցող ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի խորհրդատվական մարմին է: Սույն կարծիքը ներկայացվում է ի պատասխան վերոհիշյալ դիմումի:

<u>2. ԿԱՐԾԻՔԻ ԱՌԱՐԿԱՆ</u>

3. Կարծիքի առարկան ներառում է միայն ««Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի հիշյալ նախագիծը (այսուհետ՝ «օրենքի նախագիծ»), իսկ, անհրաժեշտության դեպքում, ինքնին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը: Սահմանափակվելով այս երկու իրավական ակտերով՝ Կարծիքը չի չպետք է դիտվի որպես Հայաստանի Հանրապետությունում այլընտրանքային ծառայությունը կարգավորող ողջ օրենսդրության լիարժեք և համապարփակ վերլուծություն:

4. Կարծիքը բարձրացնում է առանցքային հիմնահարցերը և մատնանշում մտահոգության ոլորտները: Վերլուծության արդյունքում արված առաջարկությունները հիմնված են մարդու իրավունքների ոլորտի միջազգային չափանիշների և լավագույն գործելակարգերի վրա, ինչպես որ դրանք արտացոլված են միջազգային համաձայնագրերում և պարտավորություններում, որոնք վավերացրել և ստանձնել է Հայաստանի Հանրապետությունը:

5. Սույն կարծիքը հիմնված է օրենքի նախագծի ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի կողմից տրամադրված ոչ պաշտոնական թարգմանության վրա, որը կցված է սույն փաստաթղթին՝ որպես Հավելված 1: Թարգամության պատճառով արված սխալները չեն բացառվում:

6. Հաշվի առնելով վերոգրյալը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ցանկանում է նշել, որ սույն Կարծիքը որևէ կերպ չի բացասաբար անդրադառնում այլընտրանքային ծառայությանը վերաբերող օրենսդրության այն գրավոր կամ բանավոր առաջարկությունների և դիտողությունների վրա, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կարող է անել ապագայում:

3. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓ

7. Օրենքի նախագիծն այնպիսի փոփոխություններ է պարունակում, որոնք առավել են համապատասխանեցնում «Այլընտրանքային ծառայության մասին» գործող ՀՀ օրենքը զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման իրավունքի ոլորտի միջազգային չափանիշներին: Օրենքի լիարժեք համապատասխանությունը միջազգային չափանիշներին ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք հետևյալը.

3.1 Կարևորագույն առաջարկություններ

Ա. Ապահովել, որպեսզի այլընտրանքային աշխատանքային ծառայությունը չլինի զինորական վերահսկողության տակ /14-րդ պարբերություն/:
Բ. Թույլ տալ զորակոչիկներին փոխել զինվորական ծառայությունը այլընտրանքային ծառայության հետ՝ խղճի թելադրանքով հրաժարման հիմքով /16-րդ պարբերություն/:
Գ. Քննարկել այլընտրանքային ծառայության տևողության կրճատման հարցը /17-րդ պարբերություն/:

3.2. Լրացուցիչ առաջարկություններ

Դ. Ինչ վերաբերում է զինվորական ծառայությունն այլընտրանքայինով եւ հակառակը փոխելուն, քննության առնել այնպիսի մեխանիզմի ներդրման հարցը, որը թույլ կտա ավարտված սկզբնական ծառայության ժամկետը հաշվակցել փոխարինող ծառայության ժամկետի մեջ (15-16-րդ պարբերություններ):

Ե. Ապահովել, որպեսզի այլընտրանքային ծառայության դիմումները քննող Հանրապետական հանձնաժողովը գտնվի քաղաքացիական վերահսկողության ներքո (18-րդ պարբերություն):

4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Զինվորական ծառայությունից խղճի թելադրանքով հրաժարմանը վերաբերող մարդու իրավունքների միջազգային չափանիշներ

8. Լինելով մտքի, խղճի և կրոնի ազատության բաղադրիչ՝ զինծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման իրավունքը երաշխավորված է միջազգային իրավունքի փաստաթղթերի գնալով աճող ծավալով: Չնայած այն բացահայտորեն ամրագրված չէ այնպիսի լրջագույն միջազգային պայմանագրերի տեքստում, ինչպիսիք են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միավորված ազգերի միջազգային դաշնագիրը (այսուհետ՝ ՔՔԻՄԴ)[1] կամ Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ)[2], այս իրավունքը բացահայտ եզրերով ճանաչված է հիշյալ պայմանագրերի մոնիթորինգային և մեկնաբանող մարմինների կողմից: Այսպիսով՝ Միավորված ազգերի Մարդու իրավունքների կոմիտեն ՔՔՔԻՄԴ-ի հետ կապված անառարկելիորեն հայտարարել է, որ.

> «Դաշնագիրը բացահայտ եզրերով չի ամրագրում խղճի թելադրանքով հրաժարման իրավունքը, սակայն Կոմիտեն համոզված է, որ այդ իրավունքը բխում է 18-րդ հոդվածից [ՔՔԻՄԴ], քանի որ մահաբեր ուժի կիրառման պարտականությունը կարող է լրջորեն հակասել խղճի ազատությանը և կրոնի կամ համոզմունքների արտահայտման իրավունքին»[3]:

9. Նույն կերպ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) Մեծ պալատը Հայաստանի դեմ կայացրած իր վերջին վճիռներից մեկում գտել է, որ.

---

[1] Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2200A (XXI) բանաձևով 1966թ. դեկտեմբերի 16-ին, Հայաստանի կողմից վավերացվել է 1993թ. հունիսի 23-ին:

[2] Ստորագրվել է 1950թ. նոյեմբերի 4-ին, ուժի մեջ մտել 1953թ. սեպտեմբերի 3-ին, վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից 2002թ. ապրիլի 26-ին:

[3] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 22(48)-ի 11-րդ պարբերություն՝ ընդունված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 1993թ. հուլիսի 20-ին, CCPR/C/21/Rev.1/Add.4 (1993) վերատպված U.N.Doc. HRI/GEN/1/Rev.1, 35 (1994):

«զինծառայությանն ընդդիմանալը, եթե դրա շարժառիթը լուրջ և անհաղթահարելի հակասությունն է բանակում ծառայելու պարտականության և մարդու խղճի կամ խորը և անկեղծորեն դավանած կրոնական համոզմունքների միջև, հանդիսանում է բավականաչափ համոզիչ, լուրջ, միասնական ու կարևոր հավատամք կամ համոզմունք 9-րդ հոդվածի պաշտպանությունը ստանալու տեսանկյունից»[4]:

10. ՄԻԵԴ-ը նույն վճռում այնուհետև նշել է, որ.

«[խղճի թելադրանքով հրաժարվողի] նկատմամբ պատիժ կիրառելն այնպիսի հանգամանքներում, երբ որևէ հնարավորություն չի ստեղծվում նրա խղճի և համոզմունքների պահանջները բավարարելու համար, չի կարող համարվել ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց», մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «գոյություն ունեն գործուն և արդյունավետ այլընտրանքներ, որոնք կարող են հաշտեցնել մրցակից շահերը, ինչպես ցույց է տալիս Եվրոպական պետությունների գերակշիռ մեծամասնության փորձը»:[5]

11. Զինծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման իրավունքը, ի լրումն սրանց, արտացոլված է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի[6] և նախարարների կոմիտեի[7] բազմաթիվ բանաձևերում ու հանձնարարականներում, Եվրամիության «Հիմնարար իրավունքների մասին» խարթիայում[8], ինչպես նաև ԵԱՀԿ-ի փաստաթղթերում[9]:

12. Այսպիսով՝ արդեն իսկ հաստատված իրողություն է, որ միջազգային իրավունքը ճանաչում է զինծառայությունից խղճի թելադրանքով հրաժարումը՝ որպես կրոնի կամ համոզմունքի ազատությանը բնորոշ արտահայտություն: Որպես այդպիսին՝ այն համարվում է իրավունք, որը պետական իշխանության համար առաջացնում է պոզիտիվ պարտավորություններ. Իշխանությունը, ըստ այդմ, պարտավոր է երաշխավորել դրա արդյունավետ իրականացումը գործնականում և ապահովել, որ այն ենթարկվի այնպիսի սահմանափակումների, որոնք խստիվ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում: Պետության համապատասխան պոզիտիվ պարտավորությունների

---

[4] *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (Bayatyan v Armenia)*, ՄԻԵԴ ՄՊ վճիռ, 2011թ. հուլիսի 7 (Գանգատ թիվ 23459/03), 110-րդ պարբերություն:

[5] Նույն տեղում, 124-րդ պարբերություն:

[6] Տես ԵԽԽՎ-ի 337 (1967) բանաձևը, ԵԽԽՎ-ի 478 (1967) հանձնարարականը, 8816 (1977) հանձնարարականը, 1518(2001) հանձնարարականը, 1742(2006) հանձնարարականը:

[7] Տես ԵԽ-ի նախարարների կոմիտեի R(87)8 հանձնարարականը և CM/Rec(2010)4 հանձնարարականը:

[8] Եվրամիության «Հիմնարար իրավունքների մասին» խարտիայի 10-րդ հոդվածը:

[9] Տես ԵԱՀԿ-ի Կոպենհագենի փաստաթուղթը (1990) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Կրոնի կամ համոզմունքի վերաբերյալ օրենսդրության վերանայման մասին ուղենիշների» (2004) 22-23 էջեր:

էական տարր է պատշաճ իրավական շրջանակի հաստատումը, որը կերաշխավորի խղճի թելադրանքով հրաժարման իրավունքը:

4.2. Օրենքի նախագծի վերլուծություն

13. Օրենքի նախագիծը (ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին) «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում ներմուծում է մի շարք փոփոխություններ՝ նպատակ ունենալով «հնարավորինս նվազեցնելու հնարավոր շահառուների դժգոհությունները, ինչպես նաև նպաստելու օրենքի համապատասխանությանը կարգավորման ոլորտին վերաբերող միջազգային չափորոշիչներին»[10]: Կարելի է ի սկզբանե նշել, որ առաջարկված փոփոխություններն իրավամբ կմեծացնեն օրենքի համապատասխանությունը զինծառայությունից խղճի թելադրանքով հրաժարման ոլորտի միջազգային չափանիշներին: Միևնույն ժամանակ, ինչպես մանրամասն ներկայացվում է ստորև, հարկ կլինի անդրադառնալ մի քանի այլ հարցի մինչև «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը լիովին կհամապատասխանի միջազգային չափանիշներին:
14. Օրենքի նախագծի 14-րդ հոդվածով փոփոխություններ են առաջարկվում «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածում, որոնցով առերևույթ վերացվում է կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (ենթադրաբար՝ Պաշտպանության նախարարության) վերահսկողությունը այլընտրանքային ծառայության նկատմամբ: Այլընտրանքային *աշխատանքային* ծառայության նկատմամբ վերահսկողությունը կամ հսկողությունը փոխանցվում է «պաշտպանության, առողջապահության ու աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների (այսուհետ՝ լիազորված մարմիններ)»: Այս փոփոխությունները ողջունելի են, քանի որ նպատակ ունեն ապահովելու, որպեսզի այլընտրանքային *աշխատանքային* ծառայության նկատմամբ վերահսկողությունը, որը ենթադրաբար կլինի զինծառայությունից խղճի թելադրանքով հրաժարվողների ընտրությունը, իրականացվի ոչ թե զինվորականների, այլ խառը կոմիտեի կողմից, որի կազմում կլինեն նաև քաղաքացիական մարմիններ: Միևնույն ժամանակ, օրենքի նախագիծը չի մասնավորեցնում Կոմիտեի կազմը և աշխատակարգը, ինչը թողնված է «լիազորած մարմինների ղեկավարների» համատեղ հրամանին:

[10] «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին կցված «Հիմնավորման» 6-րդ բաժինը:

Առաջարկվում է, որ Կոմիտեի կազմը և աշխատակարգն երաշխավորեն քաղաքացիական տարրի գործնական և արդյունավետ մասնակցությունը՝ ապահովելու, որ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը չշարունակի մնալ զինվորականների հսկողության ներքո: Զինվորական հրամանատարությունից և հսկողությունից արդյունավետորեն անջատվելը թույլ կտա վերափոխել այլընտրանքային աշխատանքային ծառայությունը իրապես քաղաքացիական ծառայության, ինչն այն ընդունելի տարբերակ կդարձնի խղճի թելադրանքով հրաժարվողների համար:

15. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածն փոփոխություն է առաջարկում «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում, ինչը թույլ կտա այլընտրանքային ծառայողներին այլընտրանքային ծառայության ցանկացած պահի դիմելու այլընտրանքային ծառայությունը պարտադիր զինվորական ծառայությունով փոխարինելու համար: Այս փոփոխությամբ վերանում է այլընտրանքային ծառայությունը զինծառայությունով փոխարինելու դիմումի ներկայացման՝ գործող օրենքով նախատեսված վեցամսյա սահմանափակումը: «Այլընտրանքային ծառայության մասին» գործող օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի («այլընտրանքային ծառայության ժամկետը չի մտնում պարտադիր զինվորական ծառայության ժամկետի մեջ») հետ միասին կարդալու դեպքում ստացվում է, որ անձը ում այլընտրանքային ծառայության ժամկետը՝ 36 ամիս այլընտրանքային զինվորական ծառայության դեպքում և 42 ամիս այլընտրանքային աշխատանքային ծառայության դեպքում[11], մոտենում է ավարտին և ով որոշում է անցնել զինծառայության, ստիպված է լինելու անցնել լիարժեք զինծառայություն՝ առանց հաշվի առնելու այն ժամանակը, որ նա անց է կացրել այլընտրանքային ծառայությունում: Այս դրույթը չափազանց խիստ է թվում և կարող է հետ պահել այլընտրանքային ծառայություն անցնող որոշ անձանց իրենց այլընտրանքային ծառայության մի զգալի մասն անցնելուց հետո անցնել այլընտրանքային զինծառայության: Առաջարկվում է մտածել մի այնպիսի տարբերակի մասին, որը թույլ կտա արդեն իսկ լրացրած այլընտրանքային ծառայության ժամկետը հաշվակցել/հանել ապագա զինծառայության ժամկետին(ից): Անշուշտ, այլընտրանքային ծառայության ժամկետը չպետք է հավասարեցվի զինծառայության ժամկետին, սակայն այն պետք է հաշվարկել մի բանաձևով, որը կլինի համաչափ և ոչ՝ չափազանց խիստ:

16. Միևնույն ժամանակ, խստիվ առաջարկում ենք, որ նմանատիպ տարբերակ էլ առաջարկվի այն զինակոչիկներին, ովքեր զինծառայություն անցնելու ընթացքում գիտակցում են, որ այդպիսի

[11] Տես «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը:

ծառայությունը անհաղթահարելիորեն հակասում է իրենց խորը կրոնական կամ խղճի թելադրած այլ համոզմունքներին: Գործող օրենքը ներկայումս արգելում է զորակոչից հետո զինծառայության փոխարինումը այլընտրանքային ծառայությամբ[12]: Սակայն այս արգելքը հակասում է միջազգային չափանիշներին, որոնց համաձայն՝ խղճի թելադրանքով հրաժարման իրավունքը պետք է հնարավոր լինի իրականացնել զորակոչից կամ զինծառայությունից առաջ, դրա ընթացքում կամ դրանից հետո ցանկացած ժամանակ[13]՝ հաշվի առնելով այն, որ զինծառայություն անցնող անձինք, այդ թվում՝ զինված ուժերի պրոֆեսիոնալ կազմի մոտ նույնպես կարող է *առաջանալ* խղճի թելադրանքով հրաժարվելու համոզմունք[14]: Այդ պատճառով առաջարկվում է, որ օրենքի նախագիծը նույնպես ներմուծի մի փոփոխություն, որը թույլ կտա զորակոչված ծառայողներին դիմելու իրենց կողմից սկսված զինվորական ծառայությունը այլընտրանքային ծառայությունով փոխարինելու համար: Այդպիսի փոխարինման պարագայում, նախորդ պարբերությամբ առաջարկված մեխանիզմով, ավարտված զինծառայության ժամկետը պետք է համաչափորեն հաշվակցվի (հանվի) այլընտրանքային ծառայության ժամկետին(ից):

17. Արժե հիշատակել նաև Հայաստանում այլընտրանքային ծառայության ժամկետի մասին: Օրենքի նախագծի որևէ փոփոխություն չի առաջարկում «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթներում, որոնք նախատեսում են 36 ամիս այլընտրանքային զինվորական ծառայության համար և 42 ամիս այլընտրանքային աշխատանքային ծառայության համար[15]: Եթե այս ժամկետը դիտարկում ենք կանոնավոր զինծառայության ժամկետի հետ միասին և հատկապես այլ ժողովրդավարական պետություններում այլընտրանքային ծառայության լույսի ներքո, այլընտրանքային աշխատանքային ծառայության 42-ամսյա ժամկետը թվում է անտեղի ձգձգված և կարող է նույնիսկ ընկալվել որպես պատժիչ տևողություն: Այս համատեքստում արժե հիշատակել, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն կոչ է արել պետություններին «ապահովել, որ զինվորական ծառայությանն այլընտրանք հանդիսացող ծառայության տևողությունը չունենա պատժիչ բնույթ»[16]: Հետևաբար, առաջարկվում է, որ հայաստանյան

---

[12] Տես «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:

[13] UNHCR, Կառավարություններին փոխանցված գործերի և դրանց պատասխանների ամփոփում, E/CN.4/2006/5/Add.1, 2006թ. մարտի 27, 138-րդ պարբերություն 36-րդ էջ:

[14] Տես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 1995/83 և 1998/77 բանաձևերը, տես նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)4 հանձնարարականը:

[15] Տես «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը:

[16] Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 2005թ. ապրիլի 25-ին ընդունած Եզրափակիչ դիտարկումները (CCPR/CO/83/GRC) ի լրումն Հունաստանի կողմից ներկայացված նախնական

իշխանությունը քննության առնի այլընտրանքային ծառայության տևողության կրճատման հարցը:

18. Որոշ հարցեր են մնում կապված այլընտրանքային ծառայության դիմումները քննող Հանրապետական հանձնաժողովի հետ: «Այլընտրանքային ծառայության մասին» գործող օրենքի տեքստը չի տալիս այս հանձնաժողովի կազմը և միայն նշում է, որ դրա ստեղծումը, աշխատակարգը և կազմը սահմանվում են կառավարության կողմից[17]: Համաձայն միջազգային չափանիշների՝ խղճի թելադրանքով հրաժարման հիմքով այլընտրանքային ծառայության դիմումների գնահատումը պետք է լինի քաղաքացիական մարմինների հսկողության տակ և ոչ՝ զուտ Պաշտպանության նախարարության կամ զինվորական մարմինների[18]: Հետևաբար, և եթե դա դեռևս այդպես չէ, այլընտրանքային ծառայության դիմումները քննող Հանրապետական հանձնաժողովը պետք է դրվի քաղաքացիական հսկողության տակ, և այս կազմակերպչական մեխանիզմը իդեալական տարբերակով պետք է արտացոլվի օրենքի տեքստում:

պարբերական զեկույցի (CCPR/C/GRC/2004/1), 15-րդ պարբերություն: Տես նաև CCPR/CO/83/GRC 15-րդ պարբերություն, Հատուկ զեկուցող, UNHCR, Կառավարություններին փոխանցված գործերի և դրանց պատասխանների ամփոփում, E/CN.4/2006/5/Add.1, 2006թ. մարտի 27, 5-րդ էջ:

[17] Տես «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը:

[18] Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 2005թ. ապրիլի 25-ին ընդունած Եզրափակիչ դիտարկումները (CCPR/CO/83/GRC) ի լրումն Հունաստանի կողմից ներկայացված նախնական պարբերական զեկույցի (CCPR/C/GRC/2004/1), 15-րդ պարբերություն: